

ՊՈՒԼԿԱՐԻԱ

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Տարեկան 8 Ֆր.
Վեցամսեայ 4 Ֆր.

ԱՐՏԱՍԱՀԱՆ


Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 Ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2 Տօլ.
Վեցամսեայ 1 Տօլ.

ԿԱՆԻՍԻԿ

ԵԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ
20 ՄԵՂ.



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԻ ԱՄԷՆ ՇԱՐԱԹ ՕՐԵՐ

ՀԱՍՅԷ

Rédaction du Journal

«Travounk»

Varna

Гедерция На

Вестникъ

«Правункъ»

Варна

Իրոպիշնիք եւս չեն տրոշիր

Ս. ՊԱՏՐԻԱՐԷԻՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Անցեալ ուրբաթ օրուան Ազգ. Երեսփ. Ժողովոյ որոշումը՝ Ս. Պատրիարքը իր Աթոռը վերադարձնելու մասին հայ ժողովուրդի կամքին արտայայտուած չէ, այլ կաշկանդումներու հետեանք. Ժեօն Թուրք զօմիթէն և կառավարութեան անձնական ակնկալութիւններ ունեցող հայ մէջոսները և Ազգ. վարչութեան անդամները անակնկալ ճնշում մը ի գործ դրին Ազգ. Ժողովին վրայ և այդ ճնշման ուժով յաջողեցան 40ի չափ Երեսփոխաններ իրենց առաջարկին համակերպելու Այս կը հաստատուի այն պարագայով իսկ թէ խնդրոյն վիճաբանութեան սկսուած պահուն 80 Երեսփոխաններ ներկայ կը գտնուին, բայց քուէարկութեան ժամուն ասոնց կէսը վեկնած կըլլայ ինչպէս Միթէ կաթիլիէ երեւակայնի որ Ազգին այնչափ կենսական մէկ խնդիրը վեկնելն համար 35-40 Երեսփոխաններ համբերութիւնը չունենան կէս ժամ աւելի սպասելու որ իրենց քուէն տան Այս երևոյթը ինչով կարելի է բացատրել թէ ոչ ճնշումով ու սպանալիքով:

Տակաւին մէկ քանի շաբաթ առաջ Դուրեան Պատրիարքին արդար ու կենսական պահանջներուն ամէն գնով ուժ տալ վճռող Ազգ. Ժողովը իրական ինչ դոհացում ստացաւ որ այսօր Պատրիարքը իր բողոքողի դիրքէն հանելով համակերպողի արդահատելի դիրքին մէջ դնել կորոչէ. Հագգը փաշային տարտամ և անորոշ խոստումները ինչ տարբերութիւն կրնան ունենալ Հիւրի փաշայի խոստումներէն, իր ամբողջ կեանքին մէջ միմիայն Թուրք կառավարութեան հացովը սնած Ազգեան էֆ. ի առանձնակի տեսակցութիւններովը բերուած բերանացի խոստումներէն գոնէ մէկը իրապարարած ըլլար, բան մըն էր

այն ալ չկայ այլ ընդհանրապէս դատարարական սփռագործներուն ընդհանուր ներում չնորհելու յոյժ գայթակղեցուցիչ զրոյցն է որ կը սաւառնի սարսափահար ընելով ամբողջ հայութիւնը, Զէյթունի Առաջնորդը բռնի ուժով Մարաշ կը տարուի, Կէօքտէրէլեան և Եւրիշ Հայ անմեղներ նոր դատապարտութիւններու կ'ենթարկուին. մինչ անդին Աթաբեկի մէջ դատապարտեալ Թուրք խոյր ոտնաճոյճներ արտահանման կը շարունակուին, Հագգը փաշան եթէ մազի չփ անկեղծութիւն ունենար գոնէ այս վերջինները պէտք էր կրկին կաշկանդել տար և կարեւոր նպատակ մը հասցունէր ու ձեռնադրուէր անպատան մնացած Հայ ազգեան խնդիրներ:

Ազգ. Ժողովէն կարգուած պատգամաւորութեան հրահրին Պատրիարք Սրբազանին տուած պատասխանը իր հաստատմանութեան եւ անձուէր ազգասիրութեան նոր ապացոյց մըն ալ կուտայ, ահա այդ պատասխանը. «Իրոք դիմեմ նախարարութեան, բայց երբ իմ պահանջումներու ձգձգումը տեսնեմ, յարմար առիթի մը մէջ բողոքովին պիտի հրաժարիմ և կառավարութիւնն ալ պիտի չէ նկատեմ թէ Հայոց Պատրիարքն իր իրաւարկանք ետ առած է, այլ իր պահանջներուն գոհագործութիւնն անձամբ պահանջելու համար իրաւարկանքի ինքզինքնազնայ վերադառնալ, վարչութեան առաջարկներուն հետ ես ալ իմ առաջարկներս պիտի ներկայացընեմ»:

Ազգ. վարչական և Երեսփ. Ժողովներու բռնած համակերպողի պարտաւելի դիրքին հանդէպ Դուրեան Պատրիարքի այս առնական սկզբնական կեցումը կը ծափահարենք սրտագին:

Յ. Պարպիք



ԱԶԳԱՅԻՆ

Առանցքի կուսակալը կաշմակերպած է հանդիսաւոր խնդիրը, շրջակայ քաղաքներէն ալ Հայ և Թուրք երեւելիներ հրաւիրելով 300 հոգի մասնակցած են սեղանին, թէեւ հեռագիր մը կըսէ թէ Տէր Սահակ Կաթողիկոս ալ վախի՛ն ալ կողմը նստած էր, բայց ստուգութեան կը կարօտի այս կէտը:

— Զէյթունի առաջնորդ Տ. վաղարշակ վարդ. կառավարութեան կողմէ Մարաշ տառեր է իբր գրգռիչ Այս նոր ոտնահարում մըն է Հայ ազգին ունեցած առանձնաշնորհումներուն գէմ, Համիտական րէժիմին իսկ առանց պատրիարքարանի զեկացում ընելու չէին համարձակել պերաքաւոր առաջնորդ մը բռնի տեղափոխելու, Իրազանդիոն կըսէ թէ կեդր. կառավարութեան հրամանով չէ այս կարգադրութիւնը Այդ աւելի գէշ, որ կը նշանակէ թէ այսօր գաւառակի մը կառավարութիւնը իսկ յանդգնութիւնը կրնանայ Հայ ազգին բարձրագոյն իրաւունքները ոտքի տակ առնելու ինքնագլուխ:

— Սրտի անհուն բերկրութեամբ կ'իմանանք թէ Պատրիարքարանի ոտնակալան նախարարեփեմը, որ Արտապիլը գրաւող ու կողպատող Բահիմ խանի բանակին դէմ գացած էր և վերջերս անել գրութեան մատնուած ու ծանրագէտ վերաւորուած է կըսուէր, յաջողած է թշնամի ուժերը վերջնականապէս ջախջախել և Բոհիմը իր շուրջ մնացած ձիւտներով Ռուսաց սահմանը փախցնել, Եփրեմ տակաւին կը հետապնդէ ու կը նուաճէ Ղարաաղի կողմերու ըմբոստութեամբ ցեղերը որոնք յետագիւտակոն պետերու ձեռք գործիք եղած վտանգաւոր են թէ սահմանադրական կառավարութեան հա թէ խաղաղ բնակչութեան:

— Կիրակի օր Գումգարուի եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած է միթինկ մը 1000 հոգիի ներ-

կայութեան, ուր որոշուած է խնդրել Ս. Պատրիարքէն որ չի վերադառնայ իր Աթոռը մինչեւ որ գոհացում չի տրուի Հայ ազգի արդար պահանջներուն:

— Երեսփոխանի պատր. Տեղապահը եւ Պարգեւ էֆ. փափաղեան ստիպուել են Եւֆայ դառնալ, մինչեւ որ կառավարութիւնը դուրս առնէ վանքէն ըմբոստ վարդապետները, Եւֆայի վանքին վանահայրը ևս նոյն խաչագող խմբակին պատկանելով, կուտակարութեան ուժով դուրս քաշուած է վանքէն: Երեսփոխան Ս. Յակոբայ վանքը զինուորներով պաշարուած է, վասն զի 3 ըմբոստ վարդապետները չեն յանձնուած: Վանքին մէջ գտնուող հարիւրաւոր ուխտաւորներ սարսափ սարեղած են և հեռագրով անէծք կը տեղացնեն պատճառ ելողներու գլխուն: Դէպքը թէեւ ցաւալի է, բայց պէտք է աղգային իշխանութեան դէմ ըմբոստացողները պատժուին: Տարուը Աղթաժաբի խաչագողներուն:

— Մանչեսթրի Հայ Տիկնաց միութիւնը իր հիւսցումը յայտնելով եղիպտոսի Հ. Բ. Ընդհ. Միութեան, անոր 80 ոսկի զրկած է Կիլիկիոյ որբերուն եւ արքիներուն ի նպաստ:

— Պոլսոյ մէջ նոյն Հ. Բ. Ընդհ. Միութեան մասնաճիւղ մը կը հաստատուի ընդ նախագահութեամբ Գարբիէլ էֆ. Երեսփոխանի եւ անդամակցութեամբ երեւելի ազգայիններու: Կը ցաւենք որ վասնայի մէջ տալիս չսկսաւ վաճառական դառնայից նպատակաւ շարժում մը թէեւ Խանսֆ դասակարգէ ժամ աղգայիններ վեւ և անգող կը փախաբնկալ մակերպուել, բայց պորձը նախ վերջնականութեամբ օգտակարութիւնը նկատի ունենալով, կը վարանին նախաձեռն, նարկ ըլլալու:

— Տեղւոյս Սզգ. վարժարանին ի նպաստ այս տարի եւս պարահանդէս մը տալու նպատակաւ բանակցութիւն կը կատարուի Թաղ. Խորհրդոյ անդամաց եւ վաճառական դասուն միջեւ: Կը լսենք թէ արդէն համաձայնութիւն գոյացած է որ վաճառականք իրենց հովանաւորութեան տակ առնեն հանգստը:

— Տեղի նուազութեամբ պատճառաւ թերթին շարունակութիւնը յաջորդ թիւին ձգել հարկադրուած ենք:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Վառնայի հայ հասարակութեան վիճակագրական հետեւեալ ծանօթութիւնները կուտանք մեր ընթերցողաց:

1896 թ գաղթականութենէն առաջ Վառնայի մէջ շուրջ 400 հայ ընտանիք կը բնակէր: այս թիւին ալ մէկ քառորդը թիւրքքիոյ զանազան կողմերէն եկած հայերէ կը բաղկանար:

Բայց 1896 թն Պոլսոյ Օսմ. Պանդային դէպքին ու ջարդերուն հետեւանք սարսափահար արտասահման փախչող Հայոց կարեւոր մէկ մասը պուլկար իշխանապետութեան բարեացակամութենէն օգտուելով, եկած Վառնա ապաստանած էր: Այդ օրէն ժինչև այսօր թէև 14 տարիներ անցան, բայց մինչև ցարդ այն գաղթականութենէն կարեւոր մաս մը կը մնայ այս քաղաքին մէջ հաստատուած ու տուն տեղ եղած:

1906 թն տեղւոյս թաղ խորհուրդին որոշումով և Տէր Աբիսողոմ քահանայ թորոսեանի ձեռնբերեցութեամբ կատարուած մարդահամարով տեսնուեցաւ թէ այդ թուականին Վառնայի մէջ կը բնակէին 850 հայ ընտանիք, որոնց 50ը ապօրինի կենակցողներ, այս թիւէն դուրս կը գտնուէին հազարի չափ պանդուխտներ կամ առանց բնական ժողովրդ հաստատուող թուրքերացի Հայեր:

Ստորեւ կուտանք ցուցակները 1896 թ գաղթականութենէն վեր Վառնայի մէջ տեղի ունեցած ծընունդներուն, մահերուն և ամուսնութիւններուն, քաղելով պաշտօնական արձանագրութիւններէ:

Ծ Ն Ո Ւ Ն Դ

1896 թն	81	ծնունդ մայիսէն
897 թն	180	» յուն վրէն
898 թն	160	»
899 թն	151	»
900 թն	123	»
901 թն	100	»
902 թն	119	»
903 թն	103	»
904 թն	127	»
905 թն	124	»
906 թն	118	»
907 թն	128	»
908 թն	104	»
909 թն	104	»

Մ Ա Հ

1896 թն	92	մահ Մարտ 1 էն դեկտ. 31
1897 թն	243	» յուն վրէն»
898 թն	126	»
899 թն	82	»
900 թն	82	»
901 թն	108	»
902 թն	81	»
903 թն	88	»
904 թն	66	»
905 թն	71	»
906 թն	94	»
907 թն	72	»
908 թն	73	»
909 թն	89	»

ԱՄՈՒՍԵՆՈՒԹԻՒՆՔ

1896 թն	23	Մայիս 19 էն սկսեալ
897 թն	69	յուն վար 1 էն դեկ. 31
898 թն	44	»
899 թն	34	»
900 թն	28	»
901 թն	36	»
902 թն	36	»
903 թն	44	»
904 թն	39	»
905 թն	42	»
906 թն	43	»
907 թն	40	»
908 թն	22	»
909 թն	22	»

Կ Ր Թ Ա Կ Ա Ն

Քաղաքիս Ազգ. երկսեռ վարժարանը գաղթականութենէն ի վեր ունեցած է շուրջ 300 աշակերտ և աշակերտուհի: նաև Տ. Ճիյէրճեանի աղջկանց կրթարանը կը յաճախեն 60-70 աշակերտներ երկու սեռէ: Չարժեր հոս յիշել Պատ. Ամիրխանեանցի վարժարանը որ 1-2 տարի 15-20 հայ փոքրիկներ յաճախեցին, բայց անցեալ տարի շրջանին աշակերտաց թիւը 10-12 էն աւելի չըլլալուն պատճառաւ փակուեցաւ:

Այս հայ վարժարաններէն դուրս մաս մը հայ տղաքներ ու աղջիկներ կը յաճախեն Պուլկարաց Ֆրանսացացի դպրոց ու Անտոնով վարժարանները: բայց այս օտար հաստատութիւնները յաճախողներու թիւն ալ յիսուել չանցնիր: միասին հաշուելով պուլկար կիմնադրոնի հայ աշակերտներն ալ:

Այսօր այլ և այլ վարժարաններ յաճախող երկսեռ հայ փոքրիկներուն թիւը գրեթէ 400 չափ է: որ գոհացուցիչ թիւ մը չէ շուրջ 800 հայ ընտանիքի համար: Հոս 800 ընտանիք կըսենք որովհետև 1906 թ վիճակագրութենէն յետոյ և թուրքիոյ «հուր-րիյէթ» ին առթիւ հազիւ 50-60 ընտանիք փոխադրուած է քաղաքէս: Կրնար փոխադրուողներու այս թիւը եռապատկուիլ, եթէ թուրքիոյ նոր վարչութիւնը վստահութիւն ներշնչող ընթացք մը ունենար: այլ աւաղ, ընդհանրապէս:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

Քաղաքիս Ս. Սարգիս եկեղեցւոյ տաճարին շէնքը քիչ մը աւելի ընդարձակելու և ինչ ինչ բարենորոգում ընելու պէտքը զգալի եղած էր գաղթականութեան օրերէն ի վեր: Ճարտարապետ Աբրահամ գալֆա կարապետեան ուխտած ըլլալով իր անձնական միջոցներով այդ պէտքէն զոհանքով տար վերջին օրերս քաղաքապետութենէն հարկ եղած արտօնութիւնը առնելով և յատուկ կազմէր պատրաստելով, արդէն սկսած է քար կիր և այլն պէտք եղած առաջնեքը փոխադրել եկեղեցւոյ բակը, ինքնաբերաբար:

փափաքէ մը և բարեպաշտական զգացումէ ծնունդ առած այս գործի ձեռնարկին առթիւ այլ ընդ այլոյ տարածայնութիւններ կը լսուին ժողովուրդին մէջ: Տարածայնողներ կան որ Աբրահամ գալֆան իբր թէ միայն առաջը պիտի տայ, իսկ ուրիշ ծախքերը եկեղեցւոյ պահեստի դրամէն պիտի քաշէ: Մեզ անհաւատալի թուած այս տարածայնութեան վրայ, պարտք համարեցինք կիրակի օր թաղ խորհուրդեան երթալ և ի ներկայութեան թաղ խորհրդոյ միւս անդամներուն որոշեցնելու թիւներ ուղել Աբրահամ գալֆայէն:

Նա ի պատասխանի մեր հարցումին, արտօնեալ յատակագիծը մեր առջև դնելով, յայտարարեց վճարապէս թէ տաճարին այդ բարենորոգումները ինք պիտի ընէ իր անձնական քսակէն ծախսելով և առանց սանդիւմ մը եկեղեցիին կամ ազգին բեռ ձգելու: Մենք արտագին շնորհակալութիւն յայտնելով մեկնեցանք խորհրդարանէն: Այս կը յայտարարենք յանդերձութիւն չփոխեալ մտաց:

ՊԱՇՏՈՆԱԿՆ ԹԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐԱՐԱՐԱՐՈՒՆ

Կրիկիոյ Կնդր. Որբախնամ Յանձնաժողովին կողմէ ուղղեալ յայտարարութիւն մը կը ծանոցուի թէ մայրաքաղաքին մէջ այլ եւ այլ մարմիններ եւ մասնաւոր անձեր առանց կանոնական արտօնութեան անվաւեր տոմսակներով եւ այլ միջոցներով Կրիկիոյ որբացի նպաստ հանգանակութիւններ կը կատարեն: որմէ յառաջ կուգան չարաչափութիւններ, եւ թէ նոյն մասին վանազան առաջարկներ տեղի կուենան, առանց նկատողութեան առնուելու թէ Սզգ. Վարչութենէն ընդունուած սկզբունքն է Կրիկիոյ որբերն տեղւոյն մէջ խնամել եւ անոնց մասին տեղի ունենալիք ո եւ է ձեռնարկ կամ փափագ ուղղակի ներկայացնել: Որբախնամ Յանձնաժողովոյ որոշման, Այս կարգի բարենպաստ կանոնակներու համար Ազգ. վարչութեան կողմէ ընդունուած սկզբունք եւ օրինաւորութիւնն յարգել անհրաժեշտ լինելով, ո եւ է անպատեհութեան տեղի չտրուելու համար Ազգ. Պատրիարքարանին հարկ կը դատէ յայտարարել թէ որբաց պաշտպանութեան գո, ծին սատարել փափաքողներու պէտք եղած գիւրդութիւնն մատուցուելու համար կարեւոր կարգադրութիւն սահմանուած են արդէն Որբախնամ Յանձնաժողովին կողմէ, որոնց համաձայն մայրաքաղաքին մէջ հետզհետէ որբախնամ մասնախումբեր կը կազմուին, եւ անդամաց անուններն արդէն Կնդր. Յանձնաժողովին կողմէ կը ծանուցուին լրագրաց միջոցով, ու կրնան չեղալ նուիրատուներ կը յանձնուին, հետեւաբար առկնց Կնդր. Յանձնաժողովին կողմէ կնքեալ եւ թուագրեալ տոմսերով կատարուած նուիրատուութիւններ անվաւեր կը համարուին ու այդ կարգի տոմսեր պիտի ենթարկուին գրաւման իսկ Կրիկիոյ որբերն տեղւոյն մէջ խնամելու սկզբունքը որոշուած լինելով, տարբեր ձեռնարկներու եւ փափաքներու պոհացում չի կրնա:

տրուել, իսկ այն բարեսէր անձինք որ կը փափաքին որբեր օրգեգրել, կրնան իւրաքանչիւր որբի պահպանութեան ծախքը 5 լիքա դրիկ Կնդր. Յանձնաժողովոյ որ օրգեգրներու ընտրութիւնը կը կատարէ փափաքուած կերպով:

(Կնի)

ՊՈՒԼԿԱՐԻԱ ԵՒ ԹՈՒՐԻԱ

Հակառակ պաշտօնական հաստատումներուն թէ թուրքիոյ և Պուլկարոյ միջև յարաբերութիւնք անդորրացուցիչ և անկեղծ են, Սօֆիայի ժողովուրդին մէջ մեծ անհանգստութիւն կը տիրէ, ինչ որ առաջ կուգայ մէկ կողմէ թուրքերուն զինուորական պատրաստութիւններէն սահմանափակին վրայ և միւս կողմէ ժէօն թուրք կուսակցութեան վարիչներուն թշնամական տրամադրութիւններ ունենալու լուրերէն:


Իրաւ է թէ առայժմ պուլկար-թուրք պատերազմ մը ծագելու մասնաւոր պատճառ չկայ: բայց սա ճիշտ է որ երկու երկիրներու մէջ եղած աւանդական ատելութիւնը և թուրքիոյ մէջ բնակող Պուլկարաց հանգէպ ցեղակցական չափազանց համակրանքը բաւական պատճառներ են առանց մասնաւոր պատճառի մը վէճ մը պայթեցնելու համար:

Պուլէն հաւաստիչ լուրերու նայելով, ժէօն թուրքերը աչքերնին առած են սահմաններու երկու կողմերուն վրայ պատերազմելու հարաւէն Յունաստանի դէմ և հիւսիսէն Պուլկարիոյ դէմ:

Խիտտ հաւանական է որ Պոլսոյ վարիչ շրջանակներուն մէջ գիտաւորութիւն չըլլաք Պուլկարիոյ դէմ պատերազմ հրատարակելու բայց հիւսիս-թուրքական պատերազմի մը միջոցին-զոր անհաւանական չընծայեր Աթէնքի զինուորական միութեան ծայրասիւղ վարմունքը և կրնան թշնամութիւններ ծագել թուրքիոյ և Պուլկարիոյ մէջ առանց մասնաւոր պատճառի մը, նոյն իսկ երկու կառավարութեանց կամքին հակառակ:

Վերջին օրերս թուրքիոյ կողմէ ձեռք առնուած զինուորական կարեւոր միջոցները Ատրիանուպոլսոյ նահանգին մէջ և պուլկարական սահմանագլխին վրայ կը հաստատեն այս ենթադրութիւնը և ցոյց կուտան միևնոյն ատեն թէ ժէօն թուրք շրջանակները կը հաշուեն ամէն պարագայի մէջ թէ հաւանական է որ պատերազմ մը ունենան Պուլկարիոյ դէմ ալ: Գալով Սօֆիայի ձեռնհաս շրջանակներուն, որոշապէս կը հաւատեն թէ իրենք բնաւ թշնամակոն դիտումներ չունին:

Կ Ո Վ Կ Ա Ս Ի ԲԱՐԵՂՈՒԹՅՈՒՆՔ



Գաղութի Հայոց կուստուրական Միութեան տարեկան ընդհանուր ժողովը տեղի ունենալով քննուեցաւ նոյն ընկերութեան գործադիր մարմինին 1909 տարւոյ տեղեկագիրը և հաշիւները, որոնցմէ կը քաղենք հետեւեալ յոյժ գոհացուցիչ տեղեկութիւնները:

«1909 թւին միութիւնը մըտք է ունեցել 120 765 ռուպլի բացել այգ, այն գիւղերից, որտեղ միութիւնը գարոցներ ունի, միութեան գարոցական ճիւղի գրամարկը է մօտ 26'000 ռ. ելքը լրացնելու համար: Ուրեմն միութիւնը, այս գոմարի հետ միասին ընդամենը մըտք է ունեցել 146,765 ռուպլի: Միութիւնը ունի 65 գարոցներ, 63 վարկային ընկերութիւն, որոնցից այժմ գործում են միայն 8ը: Միութիւնը պահում է Շուշայ գաւառի ծնդիքեանդ գիւղում մի հիւանդանոց, որը նպաստում է ծէ գիւղերի կարիքներին (որոնց ից 12 թուրք գիւղեր են): Հրատարակում է գիւղատնտեսական բնոյթ կրող գրքեր, ուսումնասիրում է Երեւանի նահանգը ոռոգելու միջոցները և կազմում է յմիւսմանի գաւառը ոռոգելու նախագիծը: Միութիւնը նոյնպէս կազմում է աղագրական քարտէզներ, պահում է դերասանական խումբ, կազմում է ներկայացումներ Տաճկաստանում և այլն:

«1909 տարւոյ հաշիւը հաստատուեց: Վերաստուգիչ յանձնաժողովի անդամ ընտրուեցին Պ. Պ. Ե. Իսահակեան, Մ. Տէր-Գրիգորեան, Լ. Աղաբէգեան:


Ապա ժողովը խորհրդակցեց միութեան համար նոր անգամներ հրաւիրելու մասին: Միութեան իւրաքանչիւր ճիւղի գործողութեան մէջ ինքնուրոյն լինելու սահմանների մասին, և միութեան առանց որոշ նպատակի ներքառ գումարները ճիւղերի միջև բաժանելու հարցի մասին:

Կովկասի Հայոց Հրատակական ընկերութիւնը ևս վերակազմուած ըլլալով, անոր կանոնադրութիւնը վաւերացուեցաւ Տփլիսի նահանգապետէն: Համաձայն այդ կանոնագր, ուրեմն ընկերութիւնը իրաւունք ունի հրատարակել հայերէն լեզուով բոլոր տեսակի գրքեր, նկարներ և այլն: Խորհուրդը իր հրատարակած գրքերը, բանալ գրախանութներ, պահեստներ, ունենալ շարժական գրադարաններ և այլն: Ընկերութիւնը իրաւունք ունի հայերէն լաւագոյն գրքերի համար նշանակել պարգեւներ, Բացի

կենտրոնական վարչութիւնից, ընկերութիւնը իրաւունք ունի բանալ մասնաճիւղեր, Շուշայ կը կայանայ ընկերութեան կազմակերպական նիստը: Անդամավճարն է 3 ռուպլի, որով իւրաքանչիւր անդամ իրաւունք ունի ստանալ որոշ քանակի գրքեր:

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ՎԱՌՆԱԾԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ



«Իրաւունք» լրագրոյ անցեալ շաբաթ օրուայ համարի մէջ կարդացի, Վառնայի թաղական խորհրդոյ երկու անգամեց ստորագրութեամբ հրատարակուած բողոքական հրաժարագիրը, որով ինձի կը վերագրուէր ուսուցչական մարմին ընտրութեան մէջ քմահաճ եւ ինքնազոյս կարգադրութիւններ:

Այդ հրաժարագրի մէջ ցոյց տրուած պատճառաբանութիւնները ու ինձի դէմ եղած ամբաստանութիւնները այնքան տղայական եւ այն աստիճան ծիծաղելի են որ հարցում մը միայն բաւական է: Քիչ չառ խելահաս եւ դատողութեան տէր մէկու մը իսկոյն կուսիլ տալու անոր մէջ ուրիշ միտքեր, տարբեր նպատակի մը գոյութիւնը: Այդ թերութիւնները իսկապէս եթէ կան՝ հաւանականաբար եղած են անոնք գարոցական տարեւրջանի սկիզբները: Ոնդիր է ուրեմն թէ՛ ինչու՝ համար այդ պարունները չորս ու կէս ամիս վերջը միայն ստիպուած կ'ըլլան հրաժարական տալ:

Վառնայի հայ հասարակութիւնը անշուշտ անտեղեակ ազգ. գործերու տխուր կացութենէն, չ'կրնար հեռուէն հեռու իմանալ գրութեան ծանրակշիռ հանգամանքը եւ այդ նպատակաւոր հրաժարականի իսկական իմաստը: Չըկրնար դիտել թէ՛ այդ հրաժարող պարունայք Կ. Աճէմեան եւ Արքայազն զալֆա, իրենց փորի իսկական ցաւերը ծածկելու համար կուրանան իրենց իսկ հաճութեամբ տրուած որոշումները ու գերադասեցողէն բացայայտ ճշմարտութիւնները խելագարութիւնով, անգիտութեան քողի տաք ծածկուած հրապարակ կուգան մտքերը պղծութիւնով ինքզինքնուն ընթելում ընելու որոշ դիտումներով: Ուստի պարտաւորուած կը մղուի վերջապէս պարզել իմ հայացքներս իրերու ներկայ գրութեանը մասին եւ կը ջանամ որքան կարելի է ճշգրիտ կերպով լուսարանել այն նկատումները, որոնցմէ առաջնորդուեցայ թաղ. խորհրդոյ անհնապետութեան ու թնամասայ չըրջանին մէջ:

Նախապէս թող թոյ տրուի ինձի ճակատաբաց յայտարարելու թէ՛ ատենապետութեանս օրովիմ ձեռքով տեղի ունեցած բոլոր կարգադրութիւններն ալ եղած են իմ իրաւասութեանս սահմանին մէջ եւ խորհրդոյ անդամոց մեծամասնութեան որոշումներով, որոնց մասին ինքզինքս արդարացիաբար համար, կը խուսափի ընթերցողի միտքը անտեղիօրէն զբաղեցնող մանրամասնութիւններու մէջ մտնելէ: Իյդ ամենուն համար կան իբր փաստ նիւստերու արձանագրութիւնները, պաշտօնական նամակները եւ թաղ. խորհրդոյ մնացեալ անդամոց կենդանի վկայութիւնները, որոնցմով հետաքրքրուողը կրնայ ըստաներու ճշմարտութիւնը ստուգել: Հետեւապէս այդ խնդրոյ վրայ պէտք է'նմ տեսնել աւել

լի ծանրանալ եւ կանցնիմ մասնաւոր չելու Վառնայաթնակ ազգայիններու մեծամասնութեանը սրտին մօտիկ աւելի ծանրակշիռ պարագայ մը եւ բացատրելու թէ՛ ժողովուրդի կալիֆին ինչպիսակոյ թաղ. խորհրդոյ հրաժարեալ այդ անգամները ինչպէ՞ս կը մընէին ազգային յանրու պաշտպանութիւնը եւ ո՞ր աստիճան կ'արդարացընէին հասարակութեան իրենց վրայ դրուած յոյսերը:

Պաշտօնիս ձեռնարկած օրէն իսկ, թաղականութիւնը նախապատմական ալարուրիս գրութենէն դուրս բերելու եւ զայն ինքնիրմէջ կազմակերպելու մասին հակառակ իմ թափած անվար ծիգերուն, չ'գտնուեցու գոնէ մէկը որ դիւանի կողմը ամբողջացնելու հոմար յօժարէր ստանձնելու գաւազնետութեան պէս կարեւոր պաշտօն մը, զոր երկար տարիներու շարք մը մէջ անցած էր անպատասխանատու մարդու մը, քարտազոր պ. Սիմօնեանի ձեռքը: Թաղականութեան քառասոյնի վրձնակը բարեփոխելու այդ նախնական ջանքերս էին պատճառ որ նոյն ինքն այդ պ. քարտազարը ինձի դէմ բողոքեցելով, սկսաւ իմ անձիս շուրջը նենջափառ դաւէր պատրաստել, խորհրդոյ անդամոց մէջ պառակտումներ ստեղծելու միջոցներ փնտռել: Այսպէս գրութիւնը շարունակեց տակաւին շաբաթներ, շաբաթներուն յաջորդեցին ամիսներ, ու ես յուսահատ ալ եւս այդ մասին գոհացուցիչ կարգադրութիւն մը ձեռք բերելէ, ինքնաբերաբար համաձայնեցայ նոյն իսկ իմ վրայ առնել գանձապետութիւնը եւ առաջարկեցի ուրիշ մը իմ տեղս ատենապետ կարգելու: Զինքնայնով սր այդ արժանապատուութեան տեսակէտով կրնար ինձ համար նուաճաւորացողիչ համարուիլ: Կը ցաւիմ սակայն ըսել թէ կամքի եւ զոհողութեան բացառակի բաժակայութեան հետեւանք այդ համեստ առաջարկս ալ արձագանք չըգտաւ եւ մնաց վերջնականապէս անգործադրելի:

Ազգային շահերը ամեն նկատումներէ գերի վեր դառող պ. պ. Աճէմեան եւ Արքայազն զալֆա ինչպէ՞ս օր մ'իսկ չըխղճահարուեցան որ գարոցի եւ եկեղեցւոյ նիւթական մատակարարութեան հոգին, թաղականութեան այդ ամենակարեւոր մէկ պաշտօնը ըստ առաջնոյն մնաց եւ կը մնայ տակաւին նոյն այդ քարտազարի ձեռքը, առանց համարագրութեան, առանց ո եւ է քօթիւրի: Ինչպէ՞ս կը սիմ կը ցին անտեղեկ վերաբերուի ազգային սեղօնակը թողնելու այնպիսի մարդու մը ձեռք որ շնորհիւ այդ պաշտօնին եւ իւր նենգամէտ, քննող բնաւորութեանը, տասնեակ տարիներ շարունակաբար իրեն շահատակութիւններու ուրջ է ըրել ազգային հաստատութիւնները, բացարձակապէս տէր եւ իշխան է դարձել հոն, արհամարհելով ազգային իշխանութեանը հիղինակութիւնները: Սրեւալայեցիք ո՞ր այդ մարդուկը, չ'փայցած իւր շահագրգռութիւնները աներկելի ի գործ դնելու տարապայման յաջողութիւններէն, ոչ միայն իրեն թոյլ տուած է նախորդ թաղականութեան օրովը պաշտօնական վկայագրեր տալ (կիւրիքս) տետրապետի տակ իւր սեփական առանձին ստորագրութեամբ եւ թաղ. խորհրդոյ կշիռով, այլ եւս իսկ յանգնած է խաբել կառավարական պաշտօնատուն մը յոն թաղականութեան գրամ գանձելու համար: Ինքզինքը ներկայացնել իւր նոյն խորհրդոյ մէկ անդամը:

Ահա թէ որպիսի պարագաներու մէջ է որ նոյն հրաժարած պարունները

պարտաւոր էին բողոքել եւ ազգ. շահերու նախանձախնդրութիւն ցոյց տալ:

Ինձ համար չառ հասկանալի է որ Պ. Սիմօնեան գաւազնապետութեան այդ պաշտօնը ձեռքէ չի փախցնելու համար այս պարագային մէջ ալ հարկադրուած ըլլար իւր նենգամտութեան բոլոր տաղանդը ի գործ ածելու: Բայց ինչո՞վ բացատրելու է Պ. Արքայազն զալֆա եւ ընկ. հան անոր հանդէպ ցոյց տուած ջերմ պաշպանութիւնը: Կարծես գործերու մէջ անոր բռնած ազգաշնաս ընթացքը անողողակի, գրեթէ եւ ուղղակի կերպով խախտուելու, ինչ նշանակութիւն տալու է անոր դիրքը նոյն պաշտօնի մէջ անխախտ պահելու համար թափուած բուռն ջանքերուն: Կերեւի սակայն որ Գալֆան աշակից ունենալով թաղ. խորհրդոյ անդամներէն իրեն համայնոյ մէկ երկու անգոյն դիպելու, ինք ալ իւր կարգին միամիտ փառասիրութեամբ մը կը ձգտէր իրեն ջիղերուն դպչող ուղղափառ անձնաւորութիւնները ամէն գնով զըզուեցնելու, որպէսզի միանգամ ընդմիշտ անոնց բարոյական ճնշումներէն ազատուելով յաջողի աւելի ազգեցիկ դիւք մը գրաւել ու խելքը չ'հասած վարչական գործերու մէջ ինքնուրոյն հրամանատար մը դառնալ:

Այս անհանգուրծելի պայմաններու մէջ, ընկան է ինչ ինձ համար անհնար պիտի ըլլար այնու շարունակել իմ պաշտօնը: Ուստի եւ պարտաւորուեցի իմ համարեցի Յունկար ին տեղի ունեցած գումարման մէջ տալ հրատարականս եւ բերանացի կերպով բացատրել անոր բովանդակ շարժառիթները:

Մի գարմանաք սակայն եթէ ըսեմ թէ՛ հրատարակուած հրաժարագրին տակ առաջին տեղը ստորագրող նոյն ինքն Պ. Աճէմեան էր որ միւս անգամներէն աւելի իւր պերճախօսութեամբ կը ջանար համոզել ու յետ կեցնել զիս պաշտօնէ քաշուելու դիտաւորութենէ:

Թարգոյ պաշտօնակիցներդուս մեծամասնութիւնը ինկատի ունենալով իմ հրաժարելովս թաղականութեան շայքայմանը ապառնացող վտանգը, գովելի նախաձեռնութեամբ մը ուղեցին թիւրջմացութիւնները բառնալ եւ վերստին համբաւելութիւն գոյացնելով անոր ամբողջական կազմը չ'խախտարելու: Բայց հանգամանքները եկան իմ համոզումս աւելի քան եւ ամբողջ նիւթու իմ մէջ թէ ինձ համար սկզբունքի գաւաճանութիւն պիտի ըլլար վերստին մտնել վարչական միւսնոյն կազմին մէջ: Քանի որ հան կը գտնուին իրենց պաշտօնի կատարելապէս անգիտակ, փառասիր անձնաւորութիւններ, որոնք ստորագրաւ պաշտօնեաներու հետ ջախջախ մտերմական յարաբերութիւններով ձեռք ձեռքի տուած իրենց անձնական ետի համար կը ձգտին զոհել հանրութեան ամենէն նուիրական շահերը:

Եւ այժմ կոտկած չ'կայ թէ իմ ազատութեան բողոքներուս եւ իմ հրաժարականիս արժէքը նսեմացնելու որոշ նպատակաւ մ'է որ մէջտեղ կը նետեն իրենց որպէս թէ պատճառաբանալ հրաժարականը, որպէս ի կայական միտք: Ինչ՞ մօքք ալ լսնտակութիւն:

Պէտք է խոստովանել սակայն թէ՛ վարիչ մարմիններու նշանօրինակ քմահաճ եւ տեղի վարմունքներուն հետեւանք է որ տասնեակ տարիներէ ի վեր Վառնայի մէջ ազգագրուտ եռանդուն շարժում մը, կենդանի ո եւ է հանրային գործունէութիւն մը չ'է եղած: Ընդհակառակը աստիճանաբար պաղած են զգացումսերը եւ հեղհեղեղ

հասարակութեան մէջ ազգային գործերու հանդէպ տիրած է սառն անտարբերութիւն մը. նոյն իսկ գործի լաւագոյն տրամադրութիւններ ունեցող մարդկանց զգացումներու մէջ ժամանակ է ուրիշ խորհիլ թէ մինչեւ երբ պիտի տեւէ մեր տեղական ազգային գործերու այս անկերպարան վիճակը, որուն կորստարար հետեւանքները օրըստօրէ աւելի զգալի կը դառնան, Չ'պիտի գտնուի արդեօք միջոց մը, օրինակի համար զի տակից եւ պարտաճանչ երիտասարդութեան եռանդուն պայքար մը, ազգին ղեկը յաճեալու համար լուրջ մը տաւոր պաշարով, կորսով մարդոց ձեռքը որոնք թերթերու մէջ ինքզինքնուն ձրի եւ անհիմն զօլեւտներ չուայիլ ապէս աւելի, ստանձնած պաշտօնի կարեւորութիւնը ըմբռնող եւ մանաւանդ վարժարանի բարեկարգութեան անկեղծօրէն նախանձախնդիր ըլլան: Հաւատացէք որ նիւթական բարեկեցութեան աւելի, իրարու համախօս այգպիսի եռանդուն մարդոց գործի գլուխը գտնուելէն միայն կախում ունի ազգային սնդուկը յաւիտենական շահագործողներու ճիրաններէն ազատելը, ինչպէս նաեւ մեր եկեղեցին, մասնաւորապէս վարժարանը օրինակելի վիճակի մը մէջ դրուելու պարագայն, բարձրացնելով ազգային քրիստոնէութեան տարրի առաջ, զոր սկսած է շատ յոռի եւ անհամակիր վերաբերուիլ զէպի մեզ:

Պիտի ըլլայ՝ արդեօք վերածնութեան այդ օրը, ես թերահաւատ եմ այդ մահին, բայց չ'ոյստահաւոր:

Ս. ԳԱՆԱՐԱՆ
25 Յ. ԱՆՎԱՐ 1910
Վառնա

ՀԱՎԱՏՈՒՄ

ԹԻԻՐԻՍ

Ինկիլիզ վէ Թրանսքէնիլէրի պէրապէր Սատրապի մարտնչութեան հետեւեալ պէյան էթտիլէր քէնտի հիւրիւմէթիլէրի կիրիտ իւզէրինէ Օսմանլը տէվէթիլին հուգուգընա լէպէթ իթմէք իշուն գարար վէրմիշէր տիր վէ պու մագաստէ թալիմաթ վերմիշէր տիր Աթիւնտաքի էլիլէրինէ տալիլ Բէգա մէղքիւր իքիտէվէթ Պալգանլարտա Սրաքիլ քոյի մուհաֆտա իթմէք իսթէտիլէրիլ վէ կիրիտ մէսէլէսինէն տուլայի Նիւնանիստանը գարը չըղքըղա սէպպիլթ վերմէսինէն աւլա թէհամիլ իթմէյէնէթիլէրի Այնը իսթարաթ կիրիտ հիւքիւմէթի հողքէսինէ տալիլ օլաճագ տըրի Ատանըն համիսի օլան տէօրթ տէվէթիլէր պու սըրա կիրիտ մէսէլէսինէն հայր իշուն միւղէթէրտէ տիրլէր:

Յունան էլիսի տալիլ քէնտի հիւքիւմէթիլին Օմանլը տէվէթիլ իլէ մուհիպպանէ միւնասէպաթտա պուլունմայա արգուգըն օլաղընը վէ թէհէմիլ օլունաճագ Նունան մէլիսի ու մուսի եւլընըղ Նունանիսթանըն տալիլ իշլէրիլ իլէ մէղըղ օլաղընը արգու պէյան էլլէտիլ:

—Մէլիսի Այանտա Եօրկիտիս էթի պիր մէսէլէտէն տուլայի մէսպուլար թէրպիլէրիլ իտիլօրլար տէմիլ օլունընտան, Պասրա մէպուսը Չուհէր զատէ Ահմէտ բաշա անա պիր մէթուպ եազարազ, եա մէղքիւր հաքարէթիլ սէօղիլիլ ալէնէն կէրի ալմասընը վէեախօտ աիւլլոյա կէլմէսինի թուլէպ էթմիլ տիր:

—Եթտիլ-գիւլէտէ կիճէ էվէ կիրուպ ճէպրէն Անիճանըն ըրզընա կէլմիշ օլան բօլիս Բէմալ 5 սէնէ քիւրէկէ վէ 50 իրա թաղմիւնա վէ բօլիս միշգուլլահ 2 սէնէ մահպուսիլէթէ մահընմ օլունլար:

—Խրիսթիանլարտան աքէր ալընմապընա գարը Մանասթըր վիլայէթիլին տէ թիւրքիլ պէյնիւտէն քէտիտ պիր հարէթէթ օլաղը Սէլանիլէտէն պաթէլէկրաֆ պիւտիլիլիլ:

—Սթանպուլ թէրսանէսինտէ թէլիլ թէլէկրաֆ մէրքէզիլ թէհէսիս իթմէք իշուն պահիլէնէթարէթիլինտէն գարար վէրիլ տիր, քէզա պիւթիլին հարպ վարօրլարընտա թէլիլ թէլէկրաֆ պուլունաճագ տըր:

—Պիր միւտտէթտէն պէյու Սօֆիատա պուլընան պուլկար էկզարը մայիստէ Սթանպուլ ալտէթ իտէճէք տիր, Պուլկար սիւնօթը տալիլ էքղարքհանէտէ թէհէմիլ իթմէք իշուն Պապը Ալիյէ միւրաճաթլար օլմուշ ըտը, Հագգը բաշա Պուլկարլարըն պու թալէպիլէն հիւսնի ըրկա կէսօթէրմէքտէ տիր, Բուճ բաթրիքհանէսի իսթ Սթանպուլտա պուլկար Սիւնօթը թէհէսիլինէ գարը օլմագտան մատաա էքզարքհանէսին պիլէ օրատան գալտըրըլմասընը իտտաա իթմէքտէ օլաղընտան, պու տէֆա Հագգը բաշանըն ըրկա կէսօթէրմէքտէ տուլայա իւզէրինէվ էթիլիլ տալիլիլ նաղընա կէստէրուպ մալիմաթ իսթմիշ տիր, Տալիլիլ նաղընը իսթ չիմալիլ էօյէն պիր գարար վէրիլմիշ տիր, տէյապ պաշէնտան տէֆէլլէմիշ, Հալպու քիլիլ հագգըթաթը չու տըրքիլ եագըն ալարտա Պուլկար սիւնօթը Սթանպուլ նաղը օլունաճագ:

ՍՈՒԼԷՐ ՈՒՄՈՒՄԻ

Պալգանլարտա սուլըն ումուսիլ իսլալ օլաճագընտան գորգուլարազ հէրքէս իթիլաթը տալընա մայա քէնտիլ մէճպուր կիւրմէքտէ վէ գանգալար գրէտիլէրիլ չէթէքտէ իտիլէր էօյէթիլ սօն հոթընլարտա բիաղլար բէք ֆէնա պիր գըրիլտէ պուլսնիօր ըտը, Պագաթ սօն հոթընլար ֆընտա ալընան սուլկաթը հալաթիլէր էմիլիլէթիլ ամուսիլ իպգա էթմէկէ պաշլարլար տըր, Պէյուկ տէվէթիլէր հէր հալտա Պալգանլարտա իսթաթիլ քոյը մուհաֆտա իթմէկէ վէ ուֆապ

հիւքիւմէթիլէրիլ խասիմանէ հարէթաթլարընը մէն գարար վէրմիշ տիրլէր, Պու խուսուտա Աւտարիա վէ Բուսիա պէյնիլտէ տալիլ պիր իթիլաթը մալսուս հասըլ օլաղը պիւտիլիլիլ:

Բէթէրսպուրկտան Աթալու Պուլկարըն թիւլէկրաֆ հալաթիլա իշիսի պարա էրէնթալ Բուսիա խարիճիլ նաղընը իլլօլաթիլ վէ սայիլ տէվէթիլէր գապիլէրիլ պիր պէյաննամէ կէստէրէրէք, Պալգան հալը հաղըրընը մուհաֆտա վէ թառիլ իտիլմէսինի թալէպ էլլէյէնէկիլիլ վէ պէաննամէլէրտէն սօնաա Եւրօթա տէվէթիլէրիլ իթիլաթ իտէճէթիլիլ եէնի բօլիթիլա իլէ թիւրքիլին վէ տիլէր Պալգան հիւքիւմէթիլէրիլ սիւքիլէթիլիլ թէրազգըլարը թէհէմիլ իտիլմիշ օլաղընը վէ պու սիւքիլէր Եվրօթանըն սուլըն մուհաֆտա օլունաճագը իշար օլունիլ:

ՏԱԼԻԼԻՅԷ

Գապիլէն աղալարընտան պաղընըն տէկիլիլէնէկիլիլ Սօֆիա կաղէթալարըն եաղիլօրլար, Հարպիլէն նաղընը ժէնէրալ Նիքօլըն էրէրինէ խարիճիլ նաղընը ժէնէրալ Բարիքիլըն թալիլ օլունաճագը միւրէվիլ տիր վէ խարիճիլ նէզարէթիլին Մ. Կէշուլըն տալէթ օլունաճագը սէօկէնիլիլ:

—Թուրքիա վէ Պուլկարիա պէյնիլտէն եէնի թիւրքիլ վէ կէսմիլիլ աշտամէլէրիլ թանղիլ իթմէք իշուն, Պուլկարիա մուրախալարընը թալիլ իթիլիլիլ Պապը Ալիյէ պիւտիլիլ տիր:

—Պուլկարիա բրօֆէսէօրլէրիլ Բասկալիա Եօրթուլարընտան պիլ իսթիլաթտէ, թիւրքիլ բրօֆէսէօրլէրիլ ղիյարէթ իթմէք իշուն Սթանպուլ կիլմէկէ գարար վէրմիշէր:

—Սէր գամիլթ Սարաֆօլըն գաթիլիլ տէն տուլայ թիւրքիլա գաշմըշ օլան Չէրնօ Բէլէք Եիլէն Պուլկարիա ալտէթ իթմիշ օլմասը իւզէրինէ տէրաէթ օլունալ Սօֆիատա հագս իտիլմիշ Մէրգուճ Պանտանքիլին ֆըրգասընա մէսուպ իքէն, թիւրքատա ժէնէ թիւրքիլէրիլ պուլկարլար գարըն թէհարուլընա թէհամիլ իտմէյուպ Եիլէն տաղա չըգմըշ վէ թիւրքիլ իլէ պիր իլի միւստէմէլէրտէն սօնաա պէրիլէ կէլմիշ տիր:

ՄԻԻԹԷՆԷՎԻԹԷ

—Բուս աքէրլէրիլ Աճէթ թօրաղընտան չըգմալարըն տան տօնլայը Աճէթիտան մէպուսանը խարիճիլ նաղըրընա գարըն էմիլիլէթիլ կէսթէրտիլ:

Նաղըր իսթիլաթընը վէրտիլ:

—Բահիլ խանըն րուս թօրաղընտա գապուլ օլունմաղը Աճէթիլաթտա ֆէնա թէհսիլ հասըլ իթտիլ Բուսիանըն Բահիլ խանը գապուլ իթիլէսինի Աճէթիլ քէնտիլէրինէ խուսուպէ կէսթէրմէք առտ իտէյօրլար:

Ճէնուպի Աճէթիտանտա գալկալար իսթաթ պուլմուշ տըր իսթիլաթտա թարաֆտարըն մաղուպ օլմուշլար տըր:

—Սէն Նէհրինիլ ճօլմաղընտան վէ սէլլէրտէն գարարտիտէ օլան ֆուգարալար իշլէն մէմալիլէրէնէպիլէտէն Թրանսայա կէստէրիլէն իանէլէրին մէճուլի 3 միլիոն ֆրանգա պալիլ օլուն Մէղքիլ ֆէլաթէթղտէլէր իշլէն Թրանսա հիւքիւմէթիլ տալիլ 20 միլիոն ֆր. թալիլ իթտիլ:

—Թունուպ սինօրը մէսէլէսինտէն տուլայը Թրանսա վէ թիւրքիլա պէյնիլտէն զուլուր իտէն մուխալէֆաթ հալլ օլունմըշ առտ օլունիլ թարաֆէյնտէն մուլթիլիլ պիր գամիլթիլ թէլէրիլ իլէ Թունուլ վէ թարապուլս սինօրը գաթիլէն թալիլ օլունաճագ տըր:

ԹԻԻՐԻՍ				
ՉԱԿԻՐԷ				
ՊՈՒՆՏԱՅ	Վալոն	100	քիւլ.	19. 80 20. 50
Արապա	15-80	լիպ.	հօգ	
ԱՐԻԱ	Վալոն	100	քիւլ.	12. 70, 13
Արապա	45-52	լիպ.	հօգ	
ԵՌԻԱՅ արապա	33-36	լիպ.	»	
»	100	քիւլ.	11. 60/11. 80	
ՉԱՎՏԱՐ	100		15. 30	
ՅԱՆՈՒԼԻԱ	100	քիւլ.	22. 25	
ՏԱՐԷ	100	քիւլ.	18/20	
ԴՕԼՕՁ արապա	55-60	լիպ.	հօգ	
ՄԻՍԻՐ	100	քիւլ.	12/70 13. 30	
ՉԱԿԱԼԻՅԷ				
Վառնա	քրապալարտա	պապալիլ	մալլէրին պու կիւսքիլ ֆիլաթը, ալիլ ֆալէ իլէ	
Գալէ	2.	15/2.	25	
Շէրէր	նէմէյէն	չուլալ	96.	
Շէրէր	քէսմէյ	սանտըղ	—49.	
Բիլիլնէ	ձէնօլա	չուլալ	47	
»	Ինկիլիլ	»	30. 50	
»	Իրգու	»	53.	
»	Ֆիլիպ	»	46.	
ԿԱՁ Սանտըղ			11.	
Չէթիլիլ հաղը քիւլ.			1.60—1.70	
ԳՈՒՐՈՒ Իւզիլ			60. 70	
Եւլմուրթ	100	ալէթիլ	5. 80	

ԴԱՆՆԱՅ ՄԷ

Իր բարի վարքովը, Ժրաշանութեամբը ու հմուտութեամբը մալնօթ քահանայ մը կը փալաքի պաշտօն ստանձնել Ռուսիոյ կամ արտասահմանի ու է հայ եկեղեցիի մը մէջ:

Քահանայի պէտք ունեցող պաշտօնական մարմինները կըրնան առաջին անգամ խմբագրութեան միջոցաւ բանակցութեան մտնել և հաղորդել իրենց պայմանները:

Издатель: X Курбетанъ

Տպարան «Իրաւունք»—Վառնա